բազմաթիւ ազգականներ ունին և մեծ ազդեցութիւն. բազմաթիւ հօտերու և քանի դուքանի տէր, օրը մինչև 100 հիւր այս տունը պիտի օթևաններ, ուտէր, խմէր, գնար. սորա հիւրասիրութիւնը դեռ կը շարունակուի «հացով տուն մայ[1] Ամատայ Մելիքի տուն» կասուի:

Այս տան գլխաւորներէն Մելիք և Օհան աղաներն 1891 թուին բանտարկեցին, որոց հետ իւրեանց որդիքն:

Մելիք աղան բանտի խստութեանց չտոկալով մեռաւ:

Ցեսած եմ պաժտղ քարէ մի օղի խմելու թաս, որ փոքր և խիստ լաւ է:

Պաժտղ քարը դրեթէ ամեն գիւղ կը գտնուի, սակայն շատ մանր և հազուագիւտ է, իսկ Կալոյի ձորին ձախ ափն բարձրացած ժայռերու մէջ կայ սորա ընդարձակ հանքը:

Կայ այժմ սորա մի տեսակն սորա հիւսիսն, Կաղզուանայ կողմն գտնուած լեռներու մէջ, ուստի ծխախոտ քաշելու ֆ-ղ-ֆ-ի կը շինեն, սեաւ, սպիտակ և դեղնագոյն, որուն ժողովուրդն մարմար կասէ:

---

1. Տեղացիք Ամատը յ նախդիրով կը հնչեն, սակայն այնչափ փափուկ որ չես կարող որոշել. արդէն ի եւ յ նախդիրն մնշտ կը գործածեն յարմար տեղն, օրինակ գնաց յարտ, յԱմատ, յաղբուր կամ՝ մտաւ խտուն. հոնտեց ի գետ, ընկաւ ի ջուր եւն: Որպէս Մշեցիք ՝ նախդիրն՝ նոյնպէս Բագրեւանդցիք ի եւ յ նախդիրն յաճախ կը գործածեն: